ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ МЕЦАМОР

Արմավիրի մարզ, գ. Մեծամոր

Армавирский марз, с.Мецамор

«6» 12 2011թ.

N__88__

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ուղարկվում է Արմավիրի մարզի Մեծամորի գյուղական համայնքի համայնքի 2011 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 11 նիստի որոշումները:

Համայնքի ղեկավար՝ Է.Միրզոյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ... Մուտք թիվ 11527-11 «06» 12 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

5 դեկտեմբեր 2011թ.վական | ՈՐՈՇՈՒՄ 1 | թիվ 11 նիստ

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել ավագանու 2011 թվի դեկտեմբեր 5-ի թիվ 11 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1.Միրզոյան Վարդուհի			
2.Սահակյան Հովհաննես			
3.Մխիթարյան Հովհաննես			
4.Մելքոնյան Էդվարդ			

Համայնքի ղեկավար՝ Է. Միրզոյան

2011թվականի դեկտեմբերի 5 գ. Մեծամոր

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ԹԻՎ 1

ՈՐՈՇՄԱՆ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի հաստատում:

2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2012 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

5.Համայնքի առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները հաստատելու մասին:

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

5 դեկտեմբեր 2011 թվական. ՈՐՈՇՈՒՄ 2 թիվ 11 նիստ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱԿԱՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը:

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1. Միրզոյան Վարդուհի	----------	----------	----------
2. Սահակյան Հովհաննես	----------	----------	----------
3. Մխիթարյան Հովհաննես	----------	----------	----------
4. Մելքոնյան Էդվարդ	----------	----------	----------

Համայնքի ղեկավար՝ Է. Միրզոյան

5 դեկտեմբեր 2011թվական գ. Մեծամոր

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

Մեծամոր համայնքի և նրա ենթակայության տակ գտնվող հիմնարկների
հաստիքացուցակ հաստատված 5 -12-2011

2011 փաստացի			2012 հաստատված			Տարբերությունը		
հ/հ	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի դրույք.	հ/հ	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի դրույք.	հ/հ	Պաշտոնի անվ.	Պաշտոնի դրույք.
1	համայնքի ղեկավար	150000	1	համայնքի ղեկավար	150000		X	X
2	համայնքի ղեկավարի տեղակալ	75000	2	համայնքի ղեկավարի տեղակալ	75000		X	X
3	համայնքի ղեկավարի աշխատ. քարտուղար	120000	3	համայնքի ղեկավարի աշխատ. քարտուղար	120000		X	X
4	աշխատ. գլխավոր մասնագետ	118000	4	աշխատ. գլխավոր մասնագետ	118000		X	X
5	աշխատ. առաջատար մասնագետ	60000	5	աշխատ. առաջատար մասնագետ	60000		X	X
6	աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	59000	6	աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ	59000		X	X
7	աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ	58000	7	աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ	58000		X	X
8	վարորդ	50000	8	վարորդ	50000		X	X

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

1	գրադարան մասնաճ. վարիչ	32500	1	գրադարան մասնաճ. վարիչ	32500		X	X
2	կուլտուրայի տան տնօրեն	32500	2	կուլտուրայի տան տնօրեն	32500		X	X
3	մանկապարտեզի հսկիչ	32500	3	մանկապարտեզի հսկիչ	32500		X	X
4	հավաքարար	32500	4	տնօրինության հավաքարար	32500		X	X

Համայնքի ղեկավար՝ Է. Միրզոյան

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

05 դեկտեմբեր 2011 թվական **Ո Ր Ո Շ Ո Ւ Մ** թիվ 3-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը:

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր գյուղական համայնքի 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.Միրզոյան Վարդուհի	----------	----------	----------
2.Սահակյան Հովհաննես	----------	----------	----------
3.Մխիթարյան Հովհաննես	----------	----------	----------
4.Մելքոնյան Էդվարդ	----------	----------	----------

Համայնքի ղեկավար՝ Է.Միրզոյան

2011 թվականի դեկտեմբերի 5 գ.Մեծամոր

ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

Մեծամորի ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05_Ի

N3-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ տաս հազար դրամ.

2) սույն կետի 1-ին. ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

բ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսան հազար դրամ,

գ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,

վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի ա. ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել /հինգ հազար/ դրամ:

:4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ընթացիկ տարվա համար՝ տասս հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ընթացիկ տարվա համար՝ տասս հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ հարյուր դրամ.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի , հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ երեսունհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հա ր յուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել երկու հազար դրամ:
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել տաս հազար դրամ:
11. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար հինգ հազար դրամ:
12. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել մեկ հազար դրամ:
13. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երեք հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ

«05» « դեկտեմբերի» 2011թ. N 04-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2012 թվականի դրույքաչափերը և կիրառվող գեղչերի չափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԱՎԱԳԱՆ ՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Վ.Միրզոյան /ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/
Հ.Սահակյան /ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/
Է.Մելքոնյան /ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/
Հ.Մխիթարյան /ստորագրություն/	/ստորագրություն/	/ստորագրություն/

Մեծամոր համայնքի ղեկավար՝ Է.Միրզոյան

2011թվականի դեկտեմբերի 5 գ.Մեծամոր

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ

ԹԻՎ 04-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու դեպքում խահմանել 5000 / հինգ հազար / դրամ ծառայության վճար:

2.Համայնքի բնակիչ համարվող անձանց լիազորագրեր տալու դիմաց ծառայությունների վճար սահմանել՝

1/տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու համար՝ 1000 / հազար / դրամ:

2/ աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու համար 1000 / հազար / դրամ:

3 / նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների բանկային ավանդներ ու փոստային առաքումներ / այդ թվում դրամական և ծանրոցային / ստանալու համար 1000 / հազար / դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

5 դեկտեմբերի 2011թվական ՈՐՈՇՈՒՄ թիվ 5-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԵՎՏՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել համայնքի առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի համայնքային կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1. Միրզոյան Վարդուհի			
2. Սահակյան Հովհաննես			
3. Մխիթարյան Հովհաննես			
4. Մելքոնյան Էդվարդ			

Համայնքի ղեկավար՝ Է. Միրզոյան

5 դեկտեմբերի 2011 թվական գ. Մեծամոր

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի
ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ԹԻՎ 05-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

Համայնքի առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի գյուղական համայնքի տարածքում գործող առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի հիմնարկների գործունեությունը, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության ապահովումը:

2. Համայնքի տարածքում իրականացվող առևտրի և ծառայությունների գործունեությունը կարգավորվում է «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավական այլ ակտերով:

II. ԱՌԵՎՏՈՒՐ

3. Առևտրի օբյեկտներում առուվաճառքն իրականացնում են միայն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

4. Առևտրի օբյեկտներում սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրանքախմբերի՝ առանձին բաժիններում:

5. Առևտրի օբյեկտը պետք է ապահովված լինի ապրանքների ընդունման, պահպանման և վաճառքի պայմանական ապահովվող սարքավորումներով և առևտրատեխնոլոգիական պարագաներով, կենցաղային հարմարանքներով և սանիտարական հանգույցով:

6. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ վկայականի համարի նշմամբ, իսկ յուրաքանչյուր աշխատողին՝ իր ստորագրությամբ և կնիքով հաստատված անվանաքարտով, աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և պաշտոնի նշմամբ:

7. Վաճառողը գնորդի հետ դրամական հաշվարկները իրականացնելու դեպքում պարտավոր է տրամադրել ՀԴՄ – ի չեկ (կտրոնը):

8.Գնորդին տրամադրել օրենքով սահմանված կարգով լրացված հաշվարկային փաստաթուղթ և համապատասխան հավաստագրի:

9. Վաճառքի ցուցադրված յուրաքանչյուր ապրանքանմուշ պետք է ունենա պիտակ, իսկ ապրանքատեսակը նաև գնապիտակ:

10. Դեղերի վաճառքն իրականացվում է դեղատների միջոցով:

11. Հացի և հացաբուլկեղենի մանրածախ առևտուրն իրականացվում է սննդամթերքի մասնագիտացված խանութների առանձնացված բաժնում:

12. Արտադրատեխնիկական նշանակության ապրանքների վաճառքն իրականացվում է առանձին խանութներում:

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

13. Հանրային սննդի ծառայություններն իրականացնում են իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

14. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով, ինչպես նաև հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:

15. Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա օբյեկտի մուտք տանող մատուցային և հետյոտնային ճանապարհ, անհրաժեշտ տեղեկատվության ցուցանակ և սանհանգույց:

16. Հանրային սննդի օբյեկտում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք:

17. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովվում է իր ստորագրությամբ և կնիքով հաստատված անվանաքարտով, աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և ստանդարտին համապատասխան պաշտոնի նշմամբ:

18. Անհատ ձևանկարներ հանդիսացող վաճառողը պարտավոր է գնել անվանաքարտով իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարակտիրոջ վկայականի համարի նշմամբ:

19. Հանրային սննդի օբյեկտի աշխատողները պետք է ունենա համապատասխան մասնագիտական պատրաստվածությունը հանդիսացող փաստաթուղթը, ինչպես նաև առողջության մասին բժշկի համապատասխան փաստաթուղթ:

20. Վաճառողը պետք է ունենա ճաշացանկ, որը ներկայացվում է գնորդին:

IV. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

21. . Կենցաղային ծառայության օբյեկտներում գործունեությունն իրականացնում են իրավական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

2. Կենցաղային ծառայության օբյեկտում՝ տեսանելի վայրում, պետք է փակցվի մատուցվող ծառայության գնացուցակ:

3. Կենցաղային ծառայության օբյեկտները պետք է ապահովված լինեն ՀՀ կառավարության սահմանված պահանջները բավարարող ցուցանակով:

4. Կենցաղային ծառայության օբյեկտի կատարողը իր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ և կնիքով հաստատված անվանաքարտով, աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և պաշտոնի նշմամբ:

5. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող կատարողը պարտավոր է կրել անվանաքարտ իր լուսանկարով, անվան, ազգանվան և Ա/Ձ վկայականի համարի նշմամբ:
Անվանաքարտը կրելու կարգը հաստատում է պետական կառավարմամբ լիազոր մարմինը:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6. Առևտրի և ծառայությունների ոլորտում սույն կանոնների պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Մեծամորի գյուղապետարանը:

7. Սույն կանոնների պահանջները խախտելու համար առևտրի և ծառայությունների ոլորտում գործունեության իրականացվող իրավական և ֆիզիկական անձինք կկրեն պատասխանատվություն՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

05 դեկտեմբերի 2011թ. ՈՐՈՇՈՒՄ N06-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի գյուղական համայնքի 2012թվականի բյուջեն համաձայն հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1. Միրզոյան Վարդուհի			
2. Սահակյան Հովհաննես			
3. Մելքոնյան Էդվարդ			
4. Մխիթարյան Հովհաննես			

Համայնքի ղեկավար՝ Է. Միրզոյան

2011թվականի դեկտեմբերի 5 գ. Մեծամոր